



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 4.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. **2016 թվականի սեպտեմբերի 17-ին** Սյունիքի մարզ, ք. Կապան, Արամ Մանուկյան փողոց, 1ա/19 հասցեում՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համակարգողի ընտրության համար անցկացնել Սյունիքի մարզի փաստաբանների ժողով (**այսուհետ՝ ժողով**):

2. Սահմանել, որ՝

2.1. **թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի օգոստոսի 30-ից (սույն որոշման հրապարակման օրվանից) և ավարտվում է 2016 թվականի սեպտեմբերի 3-ին, ժամը 18.00-ին.**

2.2. **թեկնածուների համակարգչային հմտությունների ստուգման և գրանցման աշխատանքները կատարվում են մինչև 2016 թվականի սեպտեմբերի 8-ը (ներառյալ).**

2.3. **քարոզչությունը սկսվում է 2016 թվականի սեպտեմբերի 11-ից և ավարտվում է 2016 թվականի սեպտեմբերի 15-ին.**

2.4. **2016 թվականի սեպտեմբերի 16-ը համարվում է լռության օր.**

2.5. **Ժողովի քվեարկությունը սկսվում է 2016 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 12:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 13:30-ին:**

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- իրազեկել Սյունիքի մարզի փաստաբաններին Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու և

30 օգոստոսի 2016թ.

թիվ 385-Լ

Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2, 4-րդ հարկ) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը փակցնելու միջոցով:

- սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին.
- մարզային հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

4. Հաստատել Սյունիքի մարզի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

30 օգոստոսի 2016թ.

թիվ 385-Լ

ք. Երևան



Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
30.08.2016թ. թիվ 385-Լ որոշման

ԾԱՆՈԽՑՈՒՄ

**Սյունիքի մարզում մարզային համակարգողի ընտրության համար
փաստաբանների ժողով հրավիրելու մասին**

ք. Երևան, Զաքիյան 2

30.08.2016թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2016 թվականի սեպտեմբերի 17-ին Սյունիքի մարզ, ք. Կապան, Արամ Մանուկյան փողոց, 1ա/19 հասցեում (ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Կապան քաղաքի նստավայր) Սյունիքի մարզի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ հրավիրվելու է Սյունիքի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համարեղ հավաք, այսուհետ՝ ժողով):

1. Քվեարկությունը սկսվում է 2016 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 12:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 13:30-ին:

2. Մարզային համակարգողի թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի օգոստոսի 30-ից և ավարտվում է 2016 թվականի սեպտեմբերի 3-ին, ժամը 18.00-ին:

3. Քարոզչությունը սկսվում է 2016 թվականի սեպտեմբերի 11-ից և ավարտվում է 2016 թվականի սեպտեմբերի 15-ին:

4. Մարզի յուրաքանչյուր փաստաբան քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:

5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:

6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:

Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը ([«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի](#) 5.5 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքիյան 2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար